



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ  
գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 6 Հեռ. 0222 6 90 70, 0222 6 90 80  
E-mail [PtxniMarat@mail.ru](mailto:PtxniMarat@mail.ru)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 Հունիսի 2012 թ. N 15

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 1.8786 ՀԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ 31  
ԿՏՈՐ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ  
ԳԱԶԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՊԱՀԵՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՀԱՄԱՐ <<ՀԱՅՈՒՍԳԱԶԱՐԴ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 և 2012 թվականի մարտի 01-ի N 239-Ն որոշումների պահանջները, հաշվի առնելով <<Հայֆուսգազարդ>> փակ բաժնետիրական ընկերության 2012 թվականի մայիսի 31-ի N ARG-03-26/2204 գրությունը՝ *ալֆազանին* որոշում է.

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 1.8786 հա ընդհանուր մակերեսով 31 կտոր էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիայի հողամասերը 99 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել <<Հայֆուսգազարդ>> փակ բաժնետիրական ընկերությանը գազի ստորգետնյա պահեստարանների սպասարկման և շահագործման համար:
2. 1.8786 հա ընդհանուր մակերեսով 31 կտոր հողամասերի համար տարեկան վարձավճարը որոշել 4250000 (չորս միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
3. Գույքային իրավունքի պետական գրանցման հետ կապված բոլոր աշխատանքները կատարել <<Հայֆուսգազարդ>> փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ— 6


Դեմ—0

Ձեռնպահ—0


Աշոտ Գաբրիելյան




Արա Ղևոնդյան



Խաչիկ Մխիթարյան




Հակոբ Վիրաբյան



Միասնիկ Մովսեսյան



Վազգեն Ասատրյան



Համայնքի ղեկավար՝



Ա. Վիրաբյան